ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

E-mail paraqar.armavir@mta.gov.am
www.parakar.am
Հեռ. 231-6-00-42, 060 530042

1149, գ. Փարաքար, Նաիրի 42

04.04.2014 թ. թիվ 224

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան Աշոտ Սարգսի

ՈՒղարկվում է Փարաքարի գյուղական համանքի ղեկավարի կողմից 2014 թվականի մարտ ամսվա ընթացում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Կից 16 թերթ:

Հարգանքով՝

Недействительная подпись

ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կատ.՝ Գ.Մանուկյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մարտի 2014թվականի N 6-Ա

### ՌՈԶԱ ԿՆՅԱԶԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 –Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ կառույցներն իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանափակումների կազմում, նույն օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով, 8-րդ ենթակետով և հիմք ընդունելով սեփականատեր Ռոզա Կնյազի Մկրտչյանի 2014 թվականի մարտի 5-ի դիմումը. ո ր ո շ ու մ ե մ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի Փարաքար գյուղում Ռոզա Կնյազի Մկրտչյանի /ծնված 06.05.1947թ./ գույքային իրավունքները՝ ճանաչել նրանց սեփականության իրավունքը 0.1527 հա հողամասի և հողամասում կառուցած185.7 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տան և շինությունների նկատմամբ: Սեփականության իրավունքը ճանաչել համաձայն հողամասի և շինությունների հատակագծերի՝ տրված 2014 թվականի հունվարի 22-ին ԱՁ ,,Կարեն Մաչանյանի ,, ԱՁ -ի կողմից ըստ որակավորման թիվ 0244 վկայականի: Վերականգնումը կատարվում է անհատույց սեփականության իրավունքով:
2. 04-094-0302-0061 կադաստրային համարով բնակելի տանը և հողատարածքին տրամադրվել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, Կոմիտասի փողոց տուն 16:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթական են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

20 14թ. _մարտի_ _20
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մարտի 2014թվականի N 7-Ա

### ԳԵՂԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին>> ՀՕ -185-Ն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետով, 11-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 18-ի թիվ 10-Ա որոշումը, որոշում եմ՝

1, Փարաքարի գյուղական համայնքի կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանի ընդլայնման և տիղմահրապարակի կառուցման նպատակով Գեղամ Հովհաննիսյանի սեփականությունը հանդիսացող 700 քմ մակերեսով հողամասը / 04-094-0567-0002 կադաստրային համարով/ օտարել Փարաքար համայնքին, վճարելով 2353000/ երկու միլիոն երեք հարյուր հիսուներեք հազար/ դրամ (2614445- 261445 = 235300) , որից 261445-ը՝ սակագնի նկատմամբ կիրառված 10 % եկամտային հարկի գումարն է:

2. Սահմանված կարգով կնքել առ ու վաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթական են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 14 թ. մարտի ____
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2014թվականի N 8-Ա

### ԴՈՒԽԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ՌՈՒԶԱՆՆԱ ՄԵՋԼՈՒՄԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԵՎ ՎԼԱԴԻԿ ՕՀԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 –Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ կառույցներն իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանափակումների կազմում, նույն օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով, 8-րդ ենթակետով և հիմք ընդունելով համասեփականատեր Վլադիկ Օհանի Հովհաննիսյանի 2014 թվականի մարտի 17-ի դիմումը. ո ր ո շ ու մ ե մ`

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի Փարաքար գյուղում Դուխիկ Կարապետի Հարությունյանի/ծնված 05.10.1940 թ./, Ռուզաննա Մեջլումի Հովհաննիսյանի /ծնված 07.06.1957թ./ և Վլադիկ Օհանի Հովհաննիսյանի /ծնված 03.06.1976 թ../ գույքային իրավունքները` ճանաչել նրանց սեփականության իրավունքը 0.050 հա տնամերձ հողամասի, հողամասին կից 0.0108 հա հողատարածքի և տնամերձ հողամասի վրա կառուցած 326.1 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տան և շինությունների նկատմամբ: Սեփականության իրավունքը ճանաչել համաձայն հողամասի և շինությունների հատակագծերի` տրված 2014 թվականի փետրվարի 28-ին ԱՁ ,,Մանուկյան Աստղիկ,, ԱՁ -ի կողմից ըստ որակավորման թիվ 096 վկայականի: Վերականգնումը կատարվում է անհատույց սեփականության իրավունքով:
2. 04-094-0018-0016 կադաստրային համարով բնակելի տանը և հողատարածքին տրամադրվել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, Նաիրի փողոց տուն 16:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթական են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 14 թ. __մարտի ________
գ.Փարաքար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մարտի 2014թվականի N 9-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Անիկ Պողոսյանի 2014 թվականի մարտի 28-ի դիմումը՝ *ո ր ո շ ու մ ե մ.*

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Անիկ Պողոսյանին և Վոլոդյա Պողոսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0.0414 հա հողամասին և 220.45 ընդհանուր մակերեսով շինությանը՝ համաձայն <<Ափթայմ>> ՍՊԸ -ի կողմից 2014 թվականի մարտի 17-ին տրված հողամասի և շինության հատակագծի, տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք գյուղ Թաիրով, Մեքենագործների փողոց թիվ 1/1:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2014 թ. _մարտի ____
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մարտի 2014 թվականի N 10-Ա

### ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Անդրանիկ Իվանյանի 2014 թվականի մարտի 28 -ի դիմումը՝
*ո ր ո շ ու մ ե մ.*

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Անդրանիկ Իվանյանին սեփականության իրավունքով պատկանող 0.061744 հա հողամասին և 284.98 ընդհանուր մակերեսով շինությանը՝ համաձայն <<Ափթայմ>> ՍՊԸ -ի կողմից 2014 թվականի մարտի 17-ին տրված հողամասի և շինությունների հատակագծի տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Թաիրով, Մայրաքաղաքային փողոց թիվ 18/1:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014 թ. _մարտի _______
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

03 մարտի 2014թվականի N 8-Ա

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Արմեն Հովհաննեսի Հարությունյանի 2014 թվականի մարտի 3-ի դիմումը, կարգադրում եմ՝

1,Արմեն Հովհաննեսի Հարությունյանին 2014 թվականի մարտի 3-ից, հինգ ամիս ժամանակով, ընդունել Հայաստանի Հանրապետության Արմնավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանում, որպես դռնապահ պահակ:

2,Աշխատավարձը սահմանել համաձայն պաշտոնային դրույքաչափի՝73200/յոթանասուներեք հազար երկու հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3, Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014թ. _մարտի ____
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

10 մարտի 2014թվականի N 9-Ա

### ՆԵԿՏԱՐ ՍԱՐԴԱՐՅԱՆԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի 2014 թվականի մարտի 7-ի զեկուցագիրը. կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի ենթակայության <<Փարաքարի մանկապարտեզ>> ՀՈԱԿ տնօրեն Նեկտար Սարդարյանի նկատմամբ կիրառել խրախուսանք դրամական պարգևատրման միջոցով՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով, նկատի ունենալով նրա երկարամյա, բարեխիղճ աշխատանքը և 60-ամյա հոբելյանական տարելիցը:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետին (Մ.Մարգարյան)՝ կատարել համապատասխան ձևակերպում:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014թ. _մարտի_ ____
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

20 մարտի 2014թվականի N 11-Ա

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավորության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացը կազմակերպելու կարգի>> 35-րդ կետի պահանջներով, տեսահսկողության համակարգ ձեռք բերելու նպատակով. կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ենթակայության ,,Մշակույթ և սպորտ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության համար տեսահսկողության համակարգ ձեռք բերելու նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել գյուղապետարանի ֆինանսական բաժինը:

2. Սույն կարգադրության 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգող սահմանել գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Վարդանյանին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014թ. __մարտի ______
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

25 մարտի 2014թվականի N 12-Ա

### ՍԱՐԻԲԵԿ ՕՀԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 161-րդ և 164-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշման N 1 հավելվածի 15-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Փարաքարի գյուղական համայնքի ղեկավարի 2014 թվականի փետրվարի 20-ի թիվ 7-Ա կարգադրությամբ հաստատված հավելվածը և Հայաստանի Հանրապետության Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի պետի համայնքային ծառայության անձնագիրը.կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի պետ Սարիբեկ Օհանյանին տրամադրել 2014 թվականի իր ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները 2014 թվականի ապրիլի 1 -ից մայիսի 7-ը ներառյալ՝ (20 նվազագույն, 4 լրացուցիչ, 1 տոնական, 2 հիշատակի) 24 աշխատանքային օր տևողությամբ:

2. Սարիբեկ Օհանյանին աշխատանքի մեջ համարել 2014 թվականի մայիսի 8-ից:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014թ. __մարտի ____
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

19 մարտի 2014թվականի N 10-Ա

### ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավորության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացը կազմակերպելու կարգի 35-րդ կետի պահանջներով. կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. ՓԳ-ՇՀԱՊՁԲ-11/ 7-14-3 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով Փարաքարի գյուղական համայնքի Թաիրովի մշակույթի տան հատակի և Փարաքարի սպորտ դահլիճի, միջանցքի վերանորոգման համար շինանյութ ձեռք բերելու նպատակով ձևավորել գնահատող հանձնաժողով և հաստատել կազմը՝ համաձայն հավելվածի.
2. Սույն կարգադրությամբ ձևավորվող գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Վարդանյանին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014թ. մարտի _10_
գ.Փարաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Փարաքարի գյուղական համայնքի ղեկավարի
2014 թվականի մարտի 19
թիվ 10-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ - Սարիբեկ Օհանյան – աշխատակազմի ընդհանուր բաժնի պետ

Տեղակալ - Արտակ Մկրտումյան - ,,Բարեկարգում,, տնօրինություն Հիմնարկի տնօրեն

Անդամներ – Վահան Մարգարյան – աշխատակազմի ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ, ճարտարագետ

Արամ Սարգսյան - աշխատակազմի ընդհանուր բաժնի առաջին կարգի մասնագետ

Արամայիս Համբարձումյան - Փարաքար համայնքի ավագանու անդամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ. ՔԵՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

26 մարտի 2014թվականի N 13- Ա

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածով և նկյատի ունենալով, որ 2015 թվականին նշվելու է Մեծ եղեռնի 100-րդ և Հայրենական Մեծ Պատերազմի հաղթանակի 70-րդ տարելիցները.

կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:
2.Հանձնաժողովին (Ս.Օհանյան)՝ Հայրենական Մեծ Պատերազմի հաղթանակի 70 և Մեծ եղեռնի 100-ամյակներին ընդառաջ Փարաքար գյուղի Հայրենական Մեծ Պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի տարածքի բարեկարգման, զոհվածների անունները անմահացնող հուշապատ և եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան կառուցելու նպատակով կազմել աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ շինարարական նյութերի և կատարվելիք աշխատանքների վերաբերյալ թերությունների ակտ և ներկայացնել համայնքի ղեկավարին:
3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014թ. __մարտի ____
գ.Փարաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Փարաքարի համայնքի ղեկավարի
2014 թվականի մարտի 26-ի
թիվ 13 –Ա կարգադրության

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

| | |
|---|---|
| Սարիբեկ Օհանյան | Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի պետ |

Տեղակալ՝

| | |
|---|---|
| Վահան Մարգարյան- | Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ |

Անդամներ՝

| | |
|---|---|
| Արտակ Մկրտումյան - | <<Բարեկարգում>> տնօրինություն հիմնարկի տնօրեն |
| Արամ Սարգսյան - | Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի առաջին կարգի մասնագետ |
| Բագրատ Մովսիսյան - | Փարաքարի համայնքի <<Մշակույթ և սպորտ>> ՀՈԱԿ գործադիր տնօրեն |
| Սամվել Ղազարյան - | Փարաքարի համայնքի ավագանու անդամ |
| Արամայիս Համբարձումյան - | Փարաքարի համայնքի ավագանու անդամ |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ. ՔԵՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

27 մարտի 2014թվականի N 14-Ա

### ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, 37-րդ հոդվածի առաջին մասի, 9-րդ կետով. կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. ՓԳ-ՇՀԱՊՁԲ -11/12-14-4 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով Փարաքար համայնքի ենթակայության ,,Մշակույթ և սպորտ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության համար տեսահսկողության համակարգ ձեռք բերելու նպատակով ձևավորել գնահատող հանձնաժողով և հաստատել կազմը ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրությամբ ձևավորվող գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Վարդանյանին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014թ. __մարտի _______
գ.Փարաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Փարաքարի համայնքի ղեկավարի
2014 թվականի մարտի 27-ի
թիվ 14 - Ա կարգադրության

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Վահան Մարգարյան - Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ

անդամներ՝

Տիգրան Ավետիսյան - Փարաքարի գյուղապետարանի համակարգչային ցանցի ադմինիստրատոր

Արամ Սարգսյան - գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ. ՔԵՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

31 մարտի 2014թվականի N 15-Ա

### ՄԱՐԳՈ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքայինն ծառայության մասին.>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի ,,բ,, ենթակետով հիմք ընդունելով Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի 2014 թվականի մարտի 7-ի զեկուցագիրը. կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի ֆինանսական բաժնի պետ Մարգո Մարգարյանի նկատմամբ կիրառել խրախուսանք դրամական պարգևատրման միջոցով՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով, նկատի ունենալով նրա երկարամյա, բարեխիղճ աշխատանքը և 60 ամյա հոբելյանական տարելիցը:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետին (Մ.Մարգարյան)՝ կատարել համապատասխան ձևակերպում:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014թ. _մարտի_ _______
գ.Փարաքար